ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«ՏԵՍԱԼՍՈՂԱԿԱՆ ՄԵԴԻԱՅԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Պ-356-19.08.2022-ԳԿ-011/0), «ԳՈՎԱԶԴԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ (Պ-356[1]-19.08.2022-ԳԿ-011/0) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՓԱԹԵԹԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

N	Առաջարկության հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերվում է առաջարկությունը	Առաջարկությունը (փոփոխությունը, լրացումը)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկությունն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	ՀՀ կառավարություն	« Տեսալսողական մեդիայի մասին» օրենքում լրացում կատարելու մասին» (Պ-356-19.08.2022-ԳԿ-011/0) օրենքի նախագծի 1-ին հոդված	Առաջարկվում է նախագծի 1-ին հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Տեսալսողական մեդիայի մասին» 2020 թվականի հուլիսի 16-ի ՀՕ-395-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 43-րդ հոդվածը լրացնել նոր 4-րդ և 5-րդ մասերով՝ հետեյալ խմբագրությամբ. «4. Սույն հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով սահմանված անվանումը չի կարող համընկնել, նույնական կամ շփոթելու աստիճան նման լինել այն անձի ապրանքային նշանին կամ ֆիրմային անվանմանը, դրա գովազդներում օգտագործված կամ օգտագործվող գրաֆիկական կամ ձայնային	Ընդունվել է	Ընդունվել է

			նշաններին, որը վերջին հինգ տարում զբաղվել է շահումով խաղի (այդ թվում՝ ինտերնետ շահումով խաղի) կամ վիճակախաղի (տոտալիզատորի) կազմակերպման գործունեությամբ: 5. Եթե հեղինակազորման հայտը չի համապատասխանում սույն հոդվածով սահմանված պահանջներին, ապա կարգավորող պետական մարմինը վերադարձնում է հայտը այն ստանալուց հետո՝ տասնօրյա ժամկետում՝ այն սույն հոդվածի պահանջներին համապատասխանեցնելու համար: Հեղինակազորման հայտը վերադարձվելուց հետո մեկամսյա ժամկետում այն սույն հոդվածի պահանջներին չհամապատասխանեցվելու և կրկին չներկայացվելու դեպքում կարգավորող պետական մարմինը մերժում է հայտը:»:		
2.	ՀՀ կառավարություն	« Տեսալսողական մեդիայի մասին» օրենքում լրացում կատարելու մասին» (Պ-356-19.08.2022-ԳԿ-011/0) օրենքի նախագծի 2-րդ հոդված	Առաջարկվում է նախագիծը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր հոդվածով. Հոդված 2. Օրենքի 58-րդ հոդվածի 1-ին մասում լրացնել նոր 9-րդ կետ. «9) Հեռարձակողի տեսալսողական ծրագրի անվանումը չի համապատասխանում	Ընդունվել է	Ընդունվել է

			սույն օրենքի 43-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջներին:»:		
3.	ՀՀ կառավարություն	« Տեսալսողական մեդիայի մասին» օրենքում լրացում կատարելու մասին» (Պ-356-19.08.2022-ԳԿ-011/0) օրենքի նախագծի 3-րդ հոդված	Առաջարկվում է նախագծի 2-րդ հոդվածի փոխարեն նախագծում նախատեսել «Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ» վերատառությամբ հոդված	Ընդունվել է	Ընդունվել է
4.	ՀՀ կառավարություն	« Տեսալսողական մեդիայի մասին» օրենքում լրացում կատարելու մասին» (Պ-356-19.08.2022-ԳԿ-011/0) օրենքի նախագծի վերնագիր	«Լրացում» բառը փոխարինել «լրացումներ» բառով	Ընդունվել է	Ընդունվել է
	ՀՀ կառավարություն	«Գովազդի մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին (Պ-356[1]-19.08.2022-ԳԿ-011/0) օրենքի նախագծի 1-ին հոդված	Առաջարկվում է«Գովազդի մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող 9-րդ հոդվածի 4-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ. 4. «4.Արգելվում է գովազդը Հանրային հեռարձակողի կրթական-մշակութային ուղղվածության ծրագրում, բացառությամբ Հանրային հեռարձակողի կրթական-մշակութային ծրագրերում ժամանցային տեսալսողական հաղորդումների հեռարձակման (գ/ֆ, վ/ֆ, հ/ս, համերգ) ժամանակ:»	Ընդունվել է	Ընդունվել է
5.	ՀՀ կառավարություն	«Գովազդի մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին (Պ-356[1]-19.08.2022-ԳԿ-011/0) օրենքի	Առաջարկվում է«Գովազդի մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող 9-րդ հոդվածի 5-րդ մասը հանել:	Ընդունվել է	Ընդունվել է

		նախագծի 1-ին հոդված			
6.	ՀՀ կառավարություն	«Գովազդի մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին (Պ-356[1]-19.08.2022-ԳԿ-011/0) օրենքի նախագծի 1-ին հոդված	Առաջարկվում է«Գովազդի մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող 9-րդ հոդվածի 8-րդ մասում «հեռուստառադիոհաղորդումներ» և «հեռուստառադիոհաղորդման» բառերը համապատասխանաբար փոխարինել «տեսալսողական հաղորդումների» և «տեսալսողական հաղորդման» բառերով	Ընդունվել է	Ընդունվել է
7.	ՀՀ կառավարություն	«Գովազդի մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին (Պ-356[1]-19.08.2022-ԳԿ-011/0) օրենքի նախագծի 3-րդ հոդված	Առաջարկվում է օրենքի նախագծի 3-րդ հոդվածի 1-ին մասում «10-րդ մասի 1-ին պարբերության» բառերը փոխարինել «10-րդ մասի» բառերով	Ընդունվել է	Ընդունվել է
8.	ՀՀ կառավարություն	«Գովազդի մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին (Պ-356[1]-19.08.2022-ԳԿ-011/0) օրենքի նախագծի 3-րդ հոդված	Առաջարկվում է օրենքի նախագծի 3-րդ հոդվածի մասերի համարակալումը տեքստից բաժանել միջակետերով	Ընդունվել է	Ընդունվել է
9.	ՀՀ կառավարություն	«Գովազդի մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին (Պ-356[1]-19.08.2022-ԳԿ-011/0) օրենքի նախագծի 3-րդ հոդված	Առաջարկվում է օրենքի նախագծի 3-րդ հոդվածի 2-րդ մասում «Արգելվում է» բառերից առաջ լրացնել «12.» թիվը և կետադրական նշանը	Ընդունվել է	Ընդունվել է
10.	ՀՀ կառավարություն	«Գովազդի մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին (Պ-356[1]-19.08.2022-ԳԿ-	Առաջարկվում է օրենքի նախագծի 3-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված փոփոխությունները վերանայել, մասնավորապես նկատի ունենալով «Նորմատիվ իրավական ակտերի մասին»	Ընդունվել է	Ընդունվել է

		011/0) օրենքի նախագծի 3-րդ հոդված	օրենքի 33-րդ հոդվածը: Ըստ այդմ օրենքի նախագծի 3-րդ հոդվածով կարգավորվող օրենքի 15-րդ հոդվածում խմբագրել « 12.1» մասը, ոչ թե ավելացնել նոր «13» մաս		
11.	ՀՀ կառավարություն	«Գովազդի մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին (Պ-356[1]-19.08.2022-ԳԿ-011/0) օրենքի նախագծի 4-րդ հոդված	Առաջարկվում է օրենքի նախագծի 4-րդ հոդվածում «Տեսալսողական» բառից առաջ լրացնել «2.» թիվ և կետադրական նշան	Ընդունվել է	Ընդունվել է
12.	ՀՀ կառավարություն	«Գովազդի մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին (Պ-356[1]-19.08.2022-ԳԿ-011/0) օրենքի նախագծի 5-րդ հոդված	Առաջարկվում է օրենքի նախագծի 5-րդ հոդվածում «հաջորդող» բառից հետո լրացնել «տասներորդ» բառով	Ընդունվել է	Ընդունվել է
13	ՀՀ կառավարություն	«Գովազդի մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին (Պ-356[1]-19.08.2022-ԳԿ-011/0) օրենքի նախագիծ	Առաջարկվում է օրենքի նախագծով սահմանել «գովազդային հատուկ հաղորդումներ» հասկացությունը	Չի ընդունվել Տվյալ առաջարկությանը հեղինակը դեմ չէ, սակայն առաջարկի հեղինակ համապատասխան գերատեսչությունը վերոնշյալ հասկացության սահմանման վերաբերյալ որևէ տեղեկատվություն չի ներկայացրել	Չի ընդունվել